

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿԵՐՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисте, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Փ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է ստուգանքի 10—2 ժամ
(քաղի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Փ օ ն № 253.

Հ Ի Մ Ե Ա Պ Ի Ը Գ Բ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Գ Ո Ւ Ն Ի

Եղիաբեթ Անդրեասան Դանիէլեզեանց իր գուտարներով, Մարգարիտ, Նատալիա, Մարիամ եւ Հեղինէ Գրիգորեանները ցաւօք սրտի յայտնում են—առաջինն իր ամուսնու, իսկ միւսներն իրանց հօր՝

ԳՐԻԳՈՐ-ԲԵԿ ԵՍԱՅԵԱՆ ԴԱՆԻԷԼԵԶԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 6-ին Յուդարկաբուրձի ճակատագրով, փետրվարի 6-ին, հանգուցեալի բնակարանից (Կոջորի փողոց, № 4 տուն Ալիսանեանի) դէպի Ջարաշէնի եկեղեցին, իսկ այդտեղից դէպի Խոջիվանքի գերեզմանատունը:

2—2

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Ո՞ւմ դիմել.—Ներքին Տեսչութիւն. Մեծաքաղաքային Տեսչութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—Հեռագրութիւն.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Ժողովրդի համար:

ՈՒՐ ԴԻՄԵԼ

Ո՞ւմ դիմել գաւառացին, երբ նրա հոգը լրում են, այդին փչացնում են, տնային անասունները գողանում են, ջրի հերթից նրան զրկում են կամ հասցնում են նրան ուրիշ վնասներ: Ո՞ւմ դիմել:

Այդ հարցը ներկայումս քննվում է Թիֆլիսի երկու գիտնական ընկերութեան մէջ: Նա յարուցել է կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ և ապա այնտեղից անցել իրաւաբանական ընկերութիւն: Վերջինս արդէն ունեցել է մի նիստ այդ հարցի վերաբերութեամբ, միւսն էլ պէտք է կայանայ հետեւեալ շաբաթվայ օրերից մէկուսն Նոյն հարցով հետաքրքրվեց նահանգական կոմիտէտը:

Ո՞ւմ դիմել: Երկու հաստատութիւն կայ, որոնց կարող է դիմել գաւառացին, այն է վարչական իշխանութեան և դատարանին:

Անկախած ամենից հետո է դիմել տեղական ոստիկանութեանը, օրինակ պրիստաւին, ուրեաղնիկին և խնդրել օգնութիւն. սակայն վարչութեան համար այնքան զիւրիւն չէ միջամտել շատ գործերի, որովհետեւ նրանք աւելի վերաբերում են դատաստանական ատենակ իրաւասութեան: Եթէ հողի վերաբերութեամբ վէճ է բացվել, ինչպէս կարող է ոստիկանութիւնը միջամտել, քանի վէճը քննված չէ իրաւաբանական տեսակետից: Եթէ այդին վայրոված է, տնային անասունները գողանալը հասարակ, ճակատի քրտինքով ազդող ժողովրդի մէջ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՍՏԱՐ

Տխուր և ողբալի է այն մտաւոր ու հոգեկան ամայութիւնը, այն անլոյս վիճակը, որին ենթարկված է մեր մէջ հասարակ ժողովուրդը, մասսան:

Անհաղորդ լոյսի բարիքներին, կարօտ ուսման և գիտութեան, կեանքը չարքայ քրտինքը ճակատից անպակամ հասարակ ժողովուրդը անուրէ մարտնչում է կտոր հացի համար. առաւօտից մինչև երեկոյն նա ընկած է օրական ապրուստի ետևից. օրվայ մէջ զարածը օրվայ մէջ էլ ձեռքից գնում է: Նա ինչպէս չը գնայ... Մարդ մի հատ չոր գլուխն անգամ դժուար է պահում, ուր մնաց, որ չոր գլխից զատ, կայ և տուն ու տեղ, կին ու երեխայ, կան ծնողներ, հարազատներ—ամենքին էլ պէտք է խնամել, ամենքի հոգան էլ պէտք է քաշել իսկ այդ հոգածութիւնը, յայտնի է, թէ որպիսի սուր, սրտամաշ կեղծպարանք է ստանում մա-

նուանդ հասարակ, ճակատի քրտինքով ազդող ժողովրդի մէջ:

Դաժան է ճեպի խնդրի լուծը... Եւ անա այդ լուծը վզին, արևածագից մինչև արևամուտ, կռիվակարը դուրսը կախ իր կոշիկն է կարում, դերձակն ասեղի վրա է մէջքը ծռած սնըռում, հացթուխը կրակի առաջն է խաչվում, մշակը իր մշակութիւնն է անում... Եւ ճեպի խնդիրը ձմեռ—ամառ, աշուն—գարուն չէ հարցնում: Նա տարին—բոլոր, անխիղճ պարտաւէրի պէս, կանգնած է հասարակ, անուս ժողովրդի դռան շէնքին, տարին—բոլոր լարում է նրա ոյժերը օրական պարէնի համար:

Բայց չէ որ մարդ միայն հացով չէ կենդանի կայ և մտքի ու հոգու աշխարհ, կայ մտքի ու հոգու կեանքը: Անա այդ աշխարհին, այդ կեանքին ամենից աւելի կարօտ է, ամենից աւելի ծարուխ է մեր մէջ ժողովուրդը, չարքայ, լոյսից գուրկ ժողովուրդը:

Այլ է լուսաւոր, քաղաքակիրթ ազգերի կեանքում հասարակ ժողովրդի վիճակը: Նրա մտաւոր ու հոգեկան կարիքները վաղուց դարձել են հասարակական եւանդուն խնամքի և հոգածութեան առարկայ: Այնտեղ ազատ ու առատ են այն միջոցները, այն հիմնարկու-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՏԱՔՍՍԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ՇՈՒՇՈՒ ԳԱՆԱՌՈՒՄ

Երամագրութիւնը և մետաքսագործութիւնը վաղուց անյայտ չեն եղել Ղարաբաղին: Որոշ շրջաններում, նախ յարմարութեան, այս կամ այն չափով զարգացած է եղել շերամագրութիւնը, սակայն, ոչ այն ծաւալով, ինչ որ մենք ներկայումս տեսնում ենք: Եւ դա ունի իր էական պատճառը:

Չորս-հինգ տասնեակ տարիներ սրանից առաջ շերամագրութիւնը չէր նկատվում որպէս արդիւնաբերութեան մի կարևոր ճիւղ, այլ որպէս անայն տնտեսութեան մի մասնաւոր ճիւղ էր: Բոժոժից պատրաստում էին թելեր, որոնցից էլ գործում էին մեծ մասամբ ջէլիմեր անկողնի համար, որոնք իրանց զինարկանութեան պատճառով մի ժամանակ բաւական տարածված էին,—մանր խուրջիներ, թամբի զարդարանքներ, քաղկեր և այլն. Եւ այդ շրջանում մի ժամանակ բաւականաչափ զարգացած էր այդ ձևի տնայնագործութիւնը, որը ներկայումս, դժբաղդաբար, չէ չարունակվում: Նոյն ծաւալով: Հետզհետէ հրապարակից սկսեց վերանայ տնայնագործութեան այդ ոչ անչափ ճիւղը, հինգ որ բոժոժը սկսեց նկատվել որպէս արտաճանութեան նիւթ:

Աղքատ շերամագրութեան տապալիչը գործող կազմութիւնի սղութիւնը և կանոնաւոր գործարարների բացակայութիւնը, հասկանալի է, թող չէին տալիս այդ գործով պարագող միջնորդներին արտահանող նիւթերին տալ այն վերջնական ձևը, ինչ որ այժմ է կատարվում: Միայն բաւականաւոր էին նրանով, որ մաքրում էին բոժոժը և որոշ, սկզբնական գործողութիւն կատարելուց յետոյ, արտահանում այլ կենտրոններ: Սակայն, հետզհետէ տեսարանը փոխվում է: Երամագրութեան գիւղացիները, չուկայի պահանջը ի նկատի ունենալով, սկսում են աւելցնել արգիւնաբերվող շերամի քանակութիւնը և միջնորդ-վաճառականներն էլ դուրս են գալիս միջնորդի դերից և հրապարակ են դալիս որպէս պատուէր տուողներ և միաժամանակ որպէս բոժոժ պատրաստողներ: Այդպիսով, երբ շերամագրութեան գործը ընդարձակ ծաւալ է ստանում, առաջ են գալիս նաև նոր ձևի գործարարներ, տեխնիկական բոլոր յարմարութիւններով:

Գործարարները, կարելի է ասել, ամբողջովին սփռված են հայկական գիւղերում: Այստեղից երևում է, որ արգիւնաբերութեան այդ էությունը ճիւղը ամբողջովին առաջ է տարվում մեր գիւղացի ազգաբնակչութեան ջանքերով և նրա մասնակցի գործն է:

Անշուշտ «Մշակի» ընթերցողների համար հե-

թիւնները, որոնք յատուկ գործօններ են հանդիսանում հասարակ ժողովրդի առաջադիմութեան Գիրք, լրագիր, դասախօսութիւններ, հանդէսներ, թատրոն զարգարան—բոլորն էլ յարմարեցրած ժողովրդի հասկացողութեան ու ճանաչիւն, բոլորն էլ մատչելի թէ գնի, թէ բովանդակութեան կողմից ծառայում են ժողովրդին, ապրում են ժողովրդի համար:

Մեզանում, ի հարկէ, դրանցից շատ ու շատ բան չը կայ, իսկ մի քանի բաների ստուերն է միայն Եւ այնպէս էլ լինել չէ կարող, քանի որ մեր բովանդակ կեանքն էլ միջին ստուերի մէջ է դեռ:

Սակայն, բարեխախտաբար, վերջին ժամանակներս մեր կեանքի այդ միջոցներն մէջ նոյնպէս սկսում են, թէն դաւուկ ցրելով, ցուլ փաթիլի կայծեր, շողիչներ, որոնք պայծառ լոյս են խոստանում անլոյս ապրող չարքայ ժողովրդին: Մեր մէջ էլ, կարծես, սկսում է գիրքն է-ժամանայ և ժողովրդի համար գրվելով ժողովրդի խորին խաւերը մտնել, ժողովրդի սրտի ու մտքի հետ խօսել: Մեր մէջ էլ, կարծես, ուզում է ծնունդ առնել ժողովրդական թատրոնը, այստեղ-այնտեղ փորձեր են

տաքերական է իմանալ՝ թէ մեր գիւղական ազգաբնակչութեան տնտեսական և բարոյական կեանքում ինչ են կատարում վերոյիշեալ գործարարները, որոնցից մէկի նկարագրութիւնը տարով, հաւաստի ենք, որ ընթերցող մի ամփոփ գաղափար կը կազմէ նաև ամբողջութեան մասին:

Ներկայումս Շուշու շրջակայ գիւղերում մետաքսագործարանների թիւը հասնում է մօտ 25-ի: Երկար բացատրութիւնների կարօտ չէ այն հանգամանքը, թէ ինչու գործարանները հիմնվում են գիւղերում: Մայրաքաղաքի շրջանի թիւը, էժան գնով աշխատող մետաքսագործարանի համար անհրաժեշտ մասնակներին մեծ քանակութիւնը և, ընդհանրապէս, աշխատող ձեռքերի առատութիւնը, որը միայն գիւղը կարող է արտադրել,—այս ամենը նպատակ է հանգամանքներ են, որ գործարանները գիւղերում ապահովեն իրանց գոյութիւնը: Պակաս պատճառներ չեն նաև պետական և հասարակական կոնտրոլի բացակայութիւնը ու գիւղացիների անասնաման ազդեցութիւնը, որոնցով գործարանատէր—վախառուն, արհամարհելով պետական օրէնքները, մի ամբողջ գիւղ իր ստրուկը դարձրած առիգում է օրվայ ընթացքում աշխատել 13½ ժամ:

Եւ մօտ ծանօթացայ Ղչաղ գիւղի մետաքսագործարանում տիրող կարգերի և կանոնների հետ: Այդ գործարանը պատկանում է չուչեցի պ. Դաւիթ Ներսիսեանին, որ բացի մեր գիւղում գտնվող գործարանից, ունի նաև հինգ գործարաններ հարևան գիւղերում: Խոստովանում էմ, Բագու-Բալախանի քանուղորդական աշխարհի սարսափները միանգամայն նսեմացան իմ աչքում: Մարդ չէ ուզում հաւատալ, որ բնութեան ծոցում, գիւղից ընդամենը մի քանի քայլ հեռավորութեան վրա գտնվող շերամագրութեան մէջ, չինութիւն, որը մինչև իսկ շրջապատված է վայրի թիֆրով,—մարդը այդչափ ողորմելի, այդչափ ճնշված, այդչափ անխիղճ շահագործութեան կարող է ենթարկված լինել: Ձեր կրած տպագրութեան ոյժը կըրկնապատկվում է մասնաւոր, երբ իմանում էք, որ այս 7—10 տարեկա աղջիկներն ու տղաները, այս ծծայր կանաչը, որոնք իրանց երեսներն էլ հետներն են ընրել,—13½ ժամ վայ չարքայ և դժոխային աշխատանքի համար ստանում են... 5—30 կոպեկ: Հինգ կոպեկից երեսունի հասնելն էլ անշուշտ շատերին չէ վիճակվում: Դրա համար էլ կան օրէնքներ. պէտք է ծառայել... տասներկու տարի Ոյ որ փոքր ի շատէ ծանօթ է գործարանական աշխատանքներին, նա կը հասկանայ, թէ ինչ է նշանակում 13½ ժամ անդու աշխատել ճիւղով գինված առատաբաշու գործող կայեացքների տակ: Տասներկու տարի գոյութիւն ունի այդ գործարանը և այդ չնչին ժամանակամիջո-

լինում կազմակերպելու ժողովրդական ներկայացուցիչներ, որոնց սիրով է վերաբերվում հասարակ ժողովուրդը:

Ուրախալի երևոյթներ... Բուն ժողովրդական ներկայացուցիչ կազմակերպելու գեղեցիկ գաղափարը նոր-նոր պատուաստվելով Թիֆլիսում, Նոր-Նախիջեւանում և այլ տեղեր, սկսել է արձագանք գտնել նաև այստեղ, Եկատերինօպարում: Այստեղ էլ ժողովրդի միջից ելած մի խումբ թատերասերներ փորձեր են անում պարբերաբար հայերէն ներկայացուցիչ տալու ժողովրդի համար:

Անա այդ թատերասեր խմբի և նրա ներկայացուցիչները մասին է, որ ուզում էմ մի քանի խօսք ասել: Եկատերինօպարը հայերի համար իսկապէս մի գաղթավայր է, որտեղ հայկական տարրը հանդիսանում է հարազատ հողից ու ջրից անջատված պանդուխտ: Իրաւ է, փոքրութիւն չէ այդ տարրը, սակայն չէ կարելի ասել, որ նա անաղարտ պահած լինի իր մայրենի վարք ու բարքը, ունենայ բուն ազգային-հասարակական կեանք և այդ կեանքով որ և է ազդեցիկ դեր խաղալիս լինի այստեղ: Այդպիսի

ցում նա կարողացել է անջնջել հետքեր թողնել մեր դեղակա ժողովրդի ֆիզիքական և բարոյական աշխարհում:

Եւ իրաւ Դուրս էք գալիս գիւղը, քիչ չեն պատահում դալկացած, նիւարած և ժամանակից առաջ ծերացած երեխաներ՝ երկու սեռից, որոնք իրանց կրծքի տակ վաղաժամ սնուցանում են թրջախտի սողմերը: Իսկ ընկառնողը կատարեալ համաճարակի կերպարանք ունի: Միթէ պէտք է զարմանայ այս երեւոյթի վրա: Միթէ այս աւելորդ արդիւնքն է գործարանի գաղձ և հոտած միջոցառումը, ուր մեր մատուց սերունդը իր օրերն է անցկացնում: Այլ ես չենք խօսում այն լուսն համբարատարութեան, այն բարոյական զոհանքների մասին, որոնց ենթակայ են մանկահասակ աշխատողները:

Վերև ասացիք, որ գործարանի կանայք աշխատում են օրվայ միջ 13½ ժամ: Շատ բնական է, որ հիշող այսպէս էլ լինի, քանի որ մետաքսագործարանները պետական որ և է հիմնարկութեան կոնտրոլի չեն ենթարկուում: Այստեղ ամեն ինչ անօրինակ է գործարանատիրոջ անզուսպ կամայականութիւնը: Անա թէ այդ ամեռած խիղճը ինչպէս է արդարացիում իր ապօրինի քայլերը: Բնական ստանալիք վարձատրութեան համար պարտաւոր էք աշխատել վաղ արշալոյսից մինչև մութ ընկնելը: Եւ որովհետև զիսկական օրը ամառվայ օրն է, ուստի պարտաւոր էք ձմեռն էլ աշխատել նոյնքան ժամ, որքան ամառն է ամառվայ օրը: Եւ սա առասպել չէ, այլ դառն իրականութիւն...

Բանող կանայք, որ ամառն էին ձմեռն ասած՝ նրանց ծնողները համարեում են այսքան գրուկանքներին, միայն ծայրայեղ չքաւորութիւնից զրկված: Ինչ էք կարծում, ընթերցող, այս բոլորից յետոյ ինչպէս է կատարվում նրանց վարձատրութիւնը:

Կար ժամանակ, և այդ ժամանակը արժան էլ մտնի անհետում չը պէտք է որոնել: Երբ քանոց կանայք իրանց զոռն աշխատանքի վարձը երեք-չորս ամիսը մի անգամ ստանալով իրանց կատարելագույն երջանիկ էին համարում: Գոնէ խիստ դժգոհութիւն չէին ալ-տայայտում: Առկառ, ինչպէս յայտնի է խեղճի ընդհանր, առհասարակ, երկար չը ժըպտաց Դարձեալ նոր կարգադրութիւն է լոյս ընկնում: «Ռոճիկները այլ ես փողով չեն տրվում այդքան արշալոյս» (!): Նրանք, որոնք անյետաձգելի կարիքներ ունեն, կարող են գործարանում բացված խանութից վերցնել իրանց հարկաւոր ստանալիքները, որոնք են գրեթէ խաւարակա զանազան չիթերներ, շաքար, թէյ, աղ, սպսոս և չմուշկներ: Իսկ այդպիսի կարիք չունեցողները իրանց ոռճիկը կը ստանան վեց ամիսը մի անգամ:

Ինչ տարեւը աւելի է, որ այս ապօրինի կարգադրութիւնը արդէ իրագործվում է:

Մենք ուղղակի զարմանում ենք պարտի վրա: Նա երկար ժամանակ ապրել է Ֆրանսիայում, ուր մասնաշխատաբար ծանօթացել է մետաքսագործութեան հետ, եղել է Ռուսաստանի զանազան կենտրոններում և, պէտք է ենթադրել, որ ծանօթ է առհասարակ բանուորական աշխարհում տիրող տարրական օրէնքների հետ: Նա պէտք է իմանայ, որ թէ և Շուշու գաւառում գտնվող մետաքսագործարանները առ այժմ ենթարկված չեն գործարանական տեսչութեան անմիջական հսկողութեան, այնուամենայնիւ, ամեն մի զեղծում և օրինա-

զանցութիւն նախատեսված է պետական հիմնական օրէնքներով:

Նա ինչ է թելադրում օրէնքը. 1) պետական և մասնաւոր բոլոր գործարաններում աշխատանքը տեւում է օրական 10—10½ ժամ: 2) Տասնեկնիցից պակաս տարիք ունեցող բանուորներ ունենալը գործարաններում արգելվում է: 3) Օրահալի աշխատող բանուորները իրանց վարձը ստանում են ամիսը երկու անգամ անպատճառ: 4) Միերեքները և այլ պայմանական նշաններով բանուորներին վարձատրելը խստիւ արգելվում է:

Օրէնքի վերջինից բոլոր կէտերը, գէրագրաբար, անխնայ խախտվում են ոչ միայն պ. Դուրիթ Ներսիսեանի գործարաններում, այլ և այն բոլոր գործարաններում, որոնք գտնվում են Շուշու գաւառում: Պ. Ներսիսեանի գործարանները շատ չեն տարբերվում միւսներից, և եթէ մենք առանձնապէս կանգ առնուք Այլադ գիւղի գործարանի վրա, այդ էլ լոկ այն պատճառով, որ աւելի ծանօթ ենք այդտեղ տիրող կարգերին:

Այս ամենից յետոյ մեզ մնում է միայն ցանկալի, որ որքան կարելի է, օր առաջ այս մետաքսագործարանները զրկեն գործարանական տեսչութեան հսկողութեան տակ:

Իշխան Միրզաբեկեան

Այլադ գիւղ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 3-ին

Ուսանողներին օգնող կողմեսան ընկերութեան վարչութիւնը խնամրաբար խնդրում է չը մերժել տպագրելու ձեր լրագրում հետեւեալը:

Ն. Ա. Ալեքսեյ-Մուսիխի, հրատարակելով ուսուցիչ լրագրում «Армянские учебные и воспитательные кампни» բրոշյուր, նրա երեսի վրա գետնից է մի յայտարարութիւն այն մասին, թէ բրոշյուրի իւրաքանչիւր վաճառված օրինակից 5 կոպէկ յատկացնվում է ուսանողներին օգնող կողմեսան ընկերութեան օգնին: Համայնարաններում և այլ բարձրագոյն ուսումնարաններում ուսանող երիտասարդներին օգնող կողմեսան ընկերութեան վարչութիւնը, ծանօթանալով բրոշյուրի բովանդակութեան հետ և ուշադրութեան անկողի, որ այդ ընկերութիւնը առ այժմ միակ հիմնարկութիւնն է, որ նպատակ է դրել իրան օգնել կողմեսանի չքաւոր ուսանողներին, առանց ազգութեան խտրութեան, յունվարի 31-ին կայացած իր նիստում որոշեց, յայտնել տեղաւոր մասնաւոր մէջ, թէ ընկերութիւնը հարարւոր չէ համարում ընդունել այն նուիրատուութիւնը, որը կազմում է «Армянские учебные и воспитательные кампни» բրոշյուրի վաճառումից գոյացած արդիւնքի մի մասը, թէ ընկերութեան վարչութիւնը չէ տուել իր համաձայնութիւնը տպագրելու ինչպէս յայտարարութիւնը այն մասին, որ 5 կոպէկ բրոշյուրի ամեն մի ծախված օրինակ կը ստանայ ընկերութիւնը:

Վարչութեան նախագ.՝ Ս. Կալբով

Գարտուղար Ռ. Յովսեփեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 5-ին

Թող տուէք ձեր պատուելի լրագրի անկիւնները մէկում հետեւեալ երկուողիս:

Մտնողներ, քոյրս և ես յայտնում ենք մեր խորին չնորհակալութիւնը այն անձանց, թէ հոգեկրակներին և թէ աշխարհակներին, աղղակներին, պաշտօնակիցներին, ընկերներին անգամ խաղում էին «Արշակ Բ», իսկ երկրորդ անգամ երեք հատ պիտե, որոնցից մէկը ֆրանսիական խոհանոցում թխած մի անիմաստ, անբովանդակ և չինական հայերենով թարգմանած կոմիդիա էր, իսկ երկուսը—ինքնուրոյն կատակերգութիւններ: Երկու ներկայացումներին ևս, որոնք ստուար բազմութիւն ին գրաւել թատրոն, մասնակցում էր մի ինչ-որ Կարմանի մաքիաների վրա հռչակված ճակոցի գրանտակական խմբի արտատես խտրողութիւնը: Արտիստի անուն կրող այդ պարտի խաղը (Աստուած թող խաղ համարէ) ինձ միանգամայն ապշեցրեց: Այդպիսի այլանդակութիւն բեմի վրա—կենսաբան մէջ առաջին անգամն էի տեսնում: Պարտը խաղում էր Արշակի դերը: Տէր Աստուած, դա ինչ Արշակ էր... Ինչ գրիմ, ինչ արտաքին, ինչ խաղ... Գերութեան շղթաներում հեծող թագաւորի մէջ չը կար թագաւորայայել խօսք ու գրոյցի, շարժումներին, վեհութեան նշոյլ անգամ: Ի՞նչ առաջ կանգնած էր կոչում և կոպիտ, վայրենատիպ մի կերպարանք, բեմի վրա դէս ուղէն ընկնող, բլաւուր, ճղաւող մի արարած, որը պատկերացնում էր այն անյայելի ժամանակաշրջանը, երբ մարդս դեռ թաւ անտառի բնակիչ էր... Նոյն անշարժութեամբ և ան-

բին, ծանօթներին և առհասարակ նրա յիշատակը յարգողներին, որոնք լրանց ներկայութեամբ, հեռաց իրներով և նամակներով յարգեցին մեր անգին ու վաղամեծիկ Վահանի յիշատակը:

Տիգրան Նալբանդեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 5-ին

«Հանդէս Ամսօրեան» այս տարվայ փետրվարի համարում խօսելով մեր ձեռնարկած «Պատմագիրք Հայոց» հրատարակութեան մասին և իր լիութի համակրութիւնը յայտնելով՝ մէջ է բերում նաև մի հատուած «Անահիտ» հանդէսից, որ «այս հոյակապ ծրագրին վրա դրուած տեօք խօսելէն և անոր մեծ կարևորութիւնը մատնանշանելէն վերջը աւելցնում է և հետեւեալ կարծիքը. «Աւագոյն չէր ըլլար արդեօք որ «Մշակ» խմբագրութիւնը, հրատարակութեան համար հարկաւոր եղած գումարը հաւաքելէ յետոյ, Վրինայի Միլիթարեան միաբանութեան յանձնէր այդ գործին հրատարակութեանը: Վրինայի Միլիթարեան Միաբանութիւնը աւելի կարող է զայն կատարելու քան «Մշակ» խմբագրութիւնը»:

Կարևոր եմ համարում այս խոշոր թիւրիմացութիւնը պարզելու համար, յայտնել, որ «Պատմագիրք Հայոց» ժողովածուի համար «Մշակ» ոչ գումար է հանգանակում և ոչ նրա հրատարակիչն է: «Մշակ» միայն միջոց տուելով ինձ հատարակութեան առաջ պարզելու հայոց գրերի գիւտը յաւերճացնելու միտքը ընդհանրապէս և «Հայոց Պատմագիրքը» տպագրելու իմ ծրագիրը մասնաւորապէս, ինչպէս նաև միջոց տուելու ուրիշներին՝ իրանց թեր և դէմ կայծիկները յայտնելու թէ ընդհանուր մտքի և թէ ծրագրի առիթով:

«Հայոց Պատմագրի» հրատարակիչներն ու աշխատակիցները «Մշակի» խմբագրութեան կողմից գրեալ անձեռից են բաղկացած, ինչպէս երևում է մեր առանձին տպագրած յայտարարից:

Ստ. Մալխասեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 1-ին

«Մշակ» № 17-ի մէջ պ. Անյուշ իր «Փոքրիկ նկատողութիւններ» վերնագրով յօդուածում, խօսելով Թիֆլիսի ժողովարանում տեղի ունեցող ներկայացումներին մասին, թոյլ է տալիս իրան մի քանի սխալ դատողութիւններ ու հակասութիւններ, որոնց ուղղելը բարոյական պարտքս եմ համարում:

Յօդուածագիրը նաև հաստատում է, թէ գործը գրված է այնքան լաւ եւ պարզ է յուսալ, որ տպագրելու կը դառնայ հասարակութեան մի որոշ գառակարգի համար պահանջ: Նա ստում է որ թէ գործը լաւ է գրված և գնում է լաւ, արձանագրվեց թէ հայոց և թէ ռուսաց մասուլի կողմից: Մի խօսքով, նա նախ հիանում է, գովում է գործը, սպա յանկարծ ֆրոնտը փոխում է և առանց որ և է պատճառի առաջարկում է, որ այսպէս ըլլաւ գրված և լաւ զնացող գործը խլիլ այժմեան ղեկավարներին և յանձնելի ուրիշներին, այն է գրամատիքական ընկերութեանը:

Հարց. Եթէ մի գործ սկսված է լաւ, ընթանում է լաւ, ամբողջ հատարակութիւնը և մասուլը գոհ են նրանից, էլ ինչ կարիք կայ նրան փոփոխելու, մէկից խլելու ու միւսին յանձնելու: Կարծում եմ, որ եթէ պ. Անյուշը ամեն մի հատարակական օգտակար ձեռնարկութեան անկեղծ ջատագով է պէտք և ուրիշներին նրա այնպիսի վերնագրի մի և նրան ժամանակ ցանկանայ, որ լաւ ուղղութեամբ սկսված գործը նոյն ուղղութեամբ շարունակվի:

Երկրորդ ներկայացումները ես չը գիտեմ, ո՞վ է Կարիսեանը և ինչպէս ու ունեցել է նա ստացել ճակոցի գրամատիքական խմբի արտատես օտարոյնը: Միայն հակակալելով կարողանում է թէ ինչն է ստիպում նրան անպատճառ դերասանութիւն անել, քանի որ Աստուած այդ չնորձը նրան չէ տուել: Եթէ հայի խնդիրն է պատճառը (ամեն ներկայացումից պարտք նիւրական նպատակ է ստանում)—դա ներելի չէ: Միթէ կենսաբան մէջ չը կան այլ ասպարէզներ, որոնց վրա նա կարող լինէր իր ընդունակութիւններն աւելի շահագործել, աւելի արդիւնաբեր գործնել և նայն իսկ ժողովրդին էլ ծառայել, եթէ նա, իրաւ, անգլան արգէն մեծ փափաք ունի ժողովրդին ծառայելու:

Գալով տեղական թատերասէր խմբին, պէտք է ասեմ, որ ընդհանուր առմամբ այդ խումբը դեռ շատ թուլակազմ է և նրա նախաձեռնած համակրելի գործն էլ աստիկ կաղում է: Խմբի մէջ կան մի քանիսը, որոնք թատերասէր լինելու շնորհք են ցոյց տալիս և հետզհետէ կարող են առաջադիւնել, բայց կան և այնպիսիները, որոնք իրեն բեմական ոյժեր, իսկի բանի պէտք չեն և, ցանկալի է, որ նրանք իրանց տեղը տային աւելի շնորհալիններին ժո-

վի Բայց ոչ, պարտն ասում է. դուք, իշխանուհի Թուսանեան, մասնաւոր գուք, պ. Արաքսեան, թէ և գործը շատ լաւ էք ստանում, բայց պէտք է յանձնէք նրան ուրիշներին:

Պ. Անյուշին ես, ի հարկէ, այնքան թեթեւամիտ չեմ համարում, որ նա չը հասկանայ իր այս քիչ զարնող հակասութիւնը: Ոչ նա ուրիշ փորագու ունի: Եւ այս փորագու ես սմ, այսինքն սիրողների խմբի ղեկավար և մասնաւոր իմ ստացած ամսական 200 ռուբլին: Որ ես ու իմ ոռճիկն ենք պարտնի փորագու, այս պտղը ու աշխարհը երևում է նրա յօդուածի շարունակութիւնից:

Այսպէս, նա առաջարկում է գրամատիքական ընկերութեան սիրողների ներկայացումների գործին խաւովելով, յանձնել նրան մի քանիսին մարմին, իրանից ընտրելով յատկապէս մէկին և իրեն նրան օգնող ընկերներ չորս հոգի տալ սիրողներին: Ապա պարտնը առաջարկում է նրանակից ղեկավարական խմբի ղեկավարին, երևի ինձ հետացնելու ցանկութեամբ իմ (sic):

Այնուհետև, պ. Անյուշը թուում է այն օգուտները, որ իր կարող է ունենալ գրամատիքական ընկերութիւնը: Ընկերութիւնը կունենայ իր անդուկում առաջինը՝ 1000—1200 ռուբլի (այսինքն իմ ոռճիկը), երկրորդ՝ սիրողների ներկայացումներից գոյացած 500 ռ. գուտ օգուտը (?), երրորդ, երկու անհրաժեշտ բեմադրանքներ—խմբի և ղեկավարի—կեսուտը մօտաւորապէս 800 ռ. (այսինքն զարձեւ իմ բեմադրանքի մուտքը), ընդամենը 2500 ռ.: Երկու անգամ երկու չորս, փիչիլը մտաւ փորս, ասում են գաւառացի երեխաները: Ինչպէս տեսնում է ընթերցողը, հարցը իսկապէս իմ և ուսանց համար աքթի փուշ դարձած ոռճիկի մասին է:

Օրպէս զի պ. Անյուշի անուշ թուումը չը խանդարտի, յայտնում եմ նրան, որ 200 ռ. ամսականը ինձ համար եւ չը տեսնում վարձ չէ: Վերջին տարին Բագուում ես ստացել եմ իրեն ղեկավար և ղեկաւոր 225 ռուբլի և մի բեմադրանքի, որ տուել է 1325 ռ. արդիւնք, այսինքն ընդհանուր հաշուով ես նիւթապէս վարձատրվել եմ 1½ անգամ աւելի, քան այս տարին Այնուհետև, ճանապարհորդելով Պետերսբուրգն ուսուց խմբի հետ Անդրկովկասի երկրում, ես ստացել եմ ամսական 385 ռուբլի ընկերութեան բաժին, ուրեմն գրեթէ երկու անգամ աւելի, քան այժմ հայոց բեմի վրա:

Հետեւաբար, ինչպէս տեսնում է պ. Անյուշը, ես մի քանիք գալլ չեմ, որ ընկել եմ ժողովարանի գառնուկ հասարակութեան վրա: Ես ստանում եմ գրեթէ այնքան, որքան մի հայու ապահ. եթէ այս էլ շատ է համարվում 15 տարի ծառայող մի դերասանի համար, ապա վայ հայ թատրոնի սպաբախին: Չը գիտեմ պ. Անյուշին ինչ իրաւունքով է կարծում, թէ եթէ գրամատիքական ընկերութիւնը ժողովարանի համար նշանակել իր ղեկավարին, այս ղեկավարը կը համաձայնվի գործը ձրի վարել: Վերջապէս, չը լինի թէ պարտնը այն կարծիք է, թէ գրամատիքական ընկերութիւնը կազմված է միայն ղեկաւորներին հարստահարելու և իր անդուկը լցնելու համար: Տարօրինակ պարագայ մի գեղարուեստական հիմնարկութեան մասին:

Բայց պ. Անյուշը ոչ միայն ինքն իրան հակասում է, այլ և երկու ոտքով ծուղակն է ընկնում: Ինչո՞ք իր յօդուածի սկզբում. «Նա ստում է, «այժմ մեզ մի հետաքրքրող խնդիրն է, որ նա (գործը) այնպէս վարվի և այնպիսի կազմակերպութիւն ստանայ, որ դառնայ մըշտական, պարտ և անկախ անհատների քառահանգներին»... Ե՛րբ օրինած, ասացէք իշխանուհի Թուսանեանի և Արաքսեանի քառահանգներին, վերջապէս գնայ էլ ինչ:

Կարող եմ, պ. Անյուշ, հաւատացնել ձեզ, որ լաւ գրված գործը միշտ էլ լաւ կընթանայ, եթէ խառնակիցները չը խանդարեն:

Սրանով ես փակում եմ ամեն մի բանակիր պ. Անյուշի հետ:

Բէկիսօր Արաքսեան

ժողովրդին ծառայելու գործում չը պէտք է լինեն անձնական կրքեր, ինքնահաւանութիւն, եւստիական ձգտումներ: Բայց գրանից խումբը ինքն չէ պիտաներ ընտրելու խնդրում: շատ անփոյթ է վերաբերվում դերերը սովորելուն, որ միանգամայն ներելի չէ ամենափորձառու դերասանին անցած, ուր մնաց թատերասէրին. քիչ ուշ է դարձնում մայրենի լեզուի կողմութեան և կանոնաւոր արտասանութեան վրա:

Ժողովրդական ներկայացումներ կազմակերպելու գործը որքան համակրելի, նոյնքան և լուրջ և ու պատասխանատու գործ է: Պէտք է մեծ սիրով և զգուշութեամբ ծառայել այդ գործին: Պէտք է իմանալ, թէ ինչ տալ ժողովրդին և ինչպէս տալ: Պէտք է գործառնում տալով ժողովրդի մտաւոր-նոգեկան պահանջներին: Նպատակն է նաև նրա ճաշակը զարգացնել, ինտելիկտների պայմանագրման Պէտք է բեմը և՛ հայելի, և՛ դպրոց լինի ժողովրդի համար, ուր ժողովուրդը տեսնելով իր կենսիկ չարն ու բարին, սեն ու սպիտակը, ուսանէ նաև բարձրացնելու, գեղեցկացնելու, իմաստալի դարձնելու այդ կենսիկը:

Սյ. Մատուրեան

Սկառնիւնադար

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ

Ուրբաթ, փետրվարի 7-ին, նշանակված է կողմաների Գիւղատնտեսական ընկերութեան անդամներին ընդհանուր ժողովը՝ շարունակելու մեր երկրի գիւղատնտեսական կարգիչների քըն- նադատութիւնը Այդ նիստում, ի միջի այլոց, կը կարգաւորէ Շան-Գիրէյի զեկուցումը հողերի ոռոգման պայմանները բարւոքելու մասին և Ծ. Գոգիլաշվիլիի զեկուցումը, որ առաջարկում է պարտաւորեցնել գիւղական հասարակութիւններին՝ անհրաժեշտ օգնութիւն հասցնելու այն անձերին, որոնք ակաւաւորութեան պատճառով ստիպված են ուրիշ տեղ գաղթել իրանց բնակութեան նախկին տեղերից:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ յունվարի 31-ին Պետերբուրգից ուղևորվեցին Պարսկաստան հաղորդակցութեան ճանապարհների մի խումբը ինծինէրներ, թւով 18 հոգի, խճուղային գիծը հետադարձելու համար Զուլֆայի, Թաւրիզի, Ղազվինի և ապա մինչև Թէհրանի ուղղութեամբ:

Այն օրվանից, որ օպերային ներկայացումները տեղափոխվեցին վրաց թատրոնից դէպի Արտիստական ընկերութեան թատրոնը, նրանք սկսեցին գրաւել հասարակութիւնը Արդարև նոր թատրոնը ունի մեծ առաւելութիւններ թէ դերասանների և թէ հանդիսականների շամար: Բեմը ընդարձակ է, զեկորացիաները ճոխ, օթեակները և աթոռները յարմար, չը կայ թափանցող քամի: Եւ աւելի ապահովութիւն կայ հրդեհի վտանգից: Երեքշաբթի, փետրվարի 4-ին, օպերային խումբը ներկայացրեց նախ Վերդիի «Բալ-Մասկարադ» օպերան և ապա Շոստրի «Գէյշա» օպերան: Երկու գործողութիւնը Բալ-Մասկարադում երգիչ Սալտո ներկայացրեց Ռիչարդին ընտրել խաղով և զեկորիչի կերպով, երգչուհի Տերտիզ ներկայացրեց Անիտային ընտրել գծերով և աջող կերպով: Պրիմաօնի, որ կատարում էր Ռենատի դերը, ընդարձակ ձայն ունի, բայց խաղում է փոքրինչ կոպիտ: Օպերանք անցաւ մեծ աշխոյժով: Թատրոնը լիքն էր:

Կառավարութեան կարգադրութեամբ ներկայ 1903 թւականի ընթացքում կողմաների նահանգներից անշարժ կալքերի հարկը պէտք է ժողովին հետևել քանակութեամբ: Թիֆլիսի նահանգից—134,000 ռուբլի, Երևանի և Գանս-ձակի նահանգներից—29,000-ական ռուբլի, Կարսի չրջանից—7,000 ռուբլի, Գուլիստանի նահանգից—63,000 ռուբլի, Գաղտանի չրջանից—10,000 ռուբլի և Ան-ժովեան նահանգից—6,000 ռուբլի:

Երեքշաբթի, փետրվարի 4-ին, դերասանուհի Կոմիտասովիկայա հանդես եկաւ Օստրովսկու «Возвращение» պիէսայում: Նա մեծ սպասարկութիւն գործեց լիբրին գործողութեան մէջ և առնասարակ ունեցաւ մեծ աջողութիւն: Թատրոնը լիքն էր: Հասարակութիւնը վարձատրեց դերասանուհուն բուռն ծափահարութիւններով:

Թիֆլիսի հայ արհեստագործներից մէկը խընդրում է մեզ տպագրել հետևեալը: «Թէև արհեստագործները իսկապէս մեծ սէր և փափագ ունենք մշտապէս թատրոն յաճախելու և մայրին լեզուով ներկայացումներ լսելու, բայց դժբախտաբար մեզ չէ աջողում երեք կաս- սայից իսկական դնով առմասկ գնելու: Պատճառը այն է, որ մի քանի փողոցային սրիկաների մշտական սովորութիւնն է՝ հայոց ներկայացումների յայտարարութիւնը լսելու ընկնելուն պէս՝ իսկոյն և եթ ձեռք բերել մեծ քանակութեամբ գալէթայի տոմսակները և ծախում են մեզ նմանների վրա կրկնապատկած գներով: Անցեալ կիրակի, փետրվարի 2-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում ցերեկվայ ներկայացում կար է ձեռնարկած գնե- րով, բայց մեզ ինչ օգուտ: Գարձեալ ճարահատված գալէթայի 15 կողէկանոց տոմսակ- ները առանց շատերն 40—50 կողէկով: Այս տղեղ և ստոր սովորութիւնը վերացնելու համար հրաւիրում ենք հայոց գրամատիկական ընկերութեան ուշադրութիւնը»:

Վարդիկավազեան ճանապարհի Կօրի կայարանից հեռագրում են, որ «Крестовый пере- валь» կողմած տեղում ճանապարհը ծածկված է ձիւնի վրէժներով և ճանապարհորդների կրկնակութիւնը դադարած է: Զիւնը շարունակում է զար:

Փետրվարի 2-ին Խարկովում կատարվեց ժո-

ղովրդական տան բացումը, որի շինութիւնը նստել է 250,000 ռուբլի: Բացմանը ներկայ լինելու համար հրաւիրված էին պետութեան զանազան տեղերից, նոյն իսկ Միբրից, նոյն տեսակ հիմնարկութիւնների ներկայացուցիչներ:

Գիւղատնտեսական ուղղիչ գաղութներ և ապաստարանների կողմաների ընկերութեան վարչութիւնը ինդրում է մեզ հաղորդել, որ կիրակի, փետրվարի 16-ին, Թիֆլիսի գաղտա- տանական պալատի շինութեան մէջ տեղի կունենայ այդ ընկերութեան անդամների ընդ- նանուր ժողովը, որ պէտք է զբաղվի վարչու- թեան գործունէութիւն քննութեամբ անցած 1902 թւականի ընթացքում, ինչպէս նաև վար- չութեան 4 անդամների ընտրութեան և այլ կարևոր հարցերով:

Ա. Ի. Մանթաշևի և ընկ.՝ նաւթարդիւնա- բերական և առևտրական ընկերութեան թոյլ է տուած վարչութեան գործունէութեան սեղը Բագուից փոխադրել Թիֆլիս:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Եղբ. Թունիքէ- կիաններից ստացվեց, հանդուցեալ Բագու-բէկի յիշատակին, խոստացված 5000 ռ., որ կտակել էին թեմական դպրոցին»:

ԹԵՂՕՍՍԻԱՅԻՑ մի պարոն ուղարկել է մեզ տպագրելու հետեւեալ նկատողութիւնը. «Կար- դաւով «Մշակ» № 76-ի մէջ ձեռնարկ Գերմա- նիայից—Հայկական երեկոյթը Հայլէում, զար- մանում եմ, որ մեր հայ ազգի մասին տեղեկու- թիւն տալու կամ ծանօթացնելու համար գեր- մանացիներ են հրաւիրում, մտաւնալով բոլոր- րովին, որ Վիէնայի մէջ կայ Միսիթթանան ուսումնական միարժուէթիւնը, որ կարող է ամենայն հաճութեամբ կատարել այդ ծառայ- ւթիւնը հայ ազգին, հետև լինելով գերմա- նական լեզուին: Ուստի փափագելի էր, որ խորհուրդ տայիք Գերմանիայի հայ ուսանող- ներին, որ այսուհետև այնպիսի ճառագիտու- թիւնների համար, որոնք Հայաստանին են վե- րաբերվում, հրաւիրեն Վիէնայից յարգող Տաշ- ձեան վարդապետին, առանց ինչայելու ճանա- պարհի ծախսը»:

ՍԵՆՏԻԱՅԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 1-ին Սև-բաղաբում կայացաւ մի ընտանեկան երեկոյթ, նուիրված Գրիգոր Արծրունու մաս- վան տասնամեակին: Շնորհի մի խումբ երան- ղոտ երիտասարդների, երեկոյթը անցաւ շատ լաւ: Նրանք ոչ մի ջանք չէին ինչայել հանդի- սականների թան առնալ յարձարութիւնը Մեքե մեզ կարծում էինք մեր տանը նստած և այս հանգամանքը բոլորին էլ գրեթէ գոհացրեց»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Այսօր, կիրակի, ամսիս 2-ին, դուստրում կայացաւ երկրորդ ժողովը քաղաքում փոխադրած վարի ընկե- րութիւնը բանաւ մասին: Անցեալ ժողովում մասնաժողովի անդամներ էին ընտրված, որոնք քննեցին Երևանում եւ Բագուում բացված ըն- կերութիւնների կանոնադրութիւնները: Այսօր- վայ ժողովականները որոշեցին ընդունել Երե- վանի կանոնադրութիւնը անփոփոխ, որի մէջ իբրև յաւելում կայ և այն մասին, որ տարե- կան զուտ արդիւնքից պիտի 10% աւելացնել իբրև պահեստի գումար: Հարց եղաւ և 20% հանելու բարեդրձական նպատակով, որը և մերժվեց: Ժողովականները դիմեցին քաղա- քային վարչութեան, ինչպէս շուտով ձեռք բերել բանկի բացման իրաւունքը»:

Գանձակի գաւառի ԳԱՄՆԱՅԻՑ գիւղից մեզ գրում են. «Մօտ երկու ամիս է, որ մեր գիւ- ղում երեխաների կէլք տարածված է մի տե- սակ հազ, որից երբ երեխան ընտրվում է, ու- շաթափված գետին է ընկնում: Այդ հիւանդու- թիւնը բաւական զոհեր տարաւ մասնակիցից: Պատահում է նաև ըկացաւ (սկարլատինա) հի- վանդութիւնը, ակնյայտն է, որ մի փոքր ժա- մանակից յետոյ վարակելու է ամբողջ գիւղը և իր կոտորածն անելու, ինչպէս նաև մի քիչ գիւղում, որտեղ թաղվում է օրական ամհա- պակասը 2—4 երեխայ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՆԱՄԱԿ ՊԵՐՍՈՒՄԱՆԻՑ
Գրիգոր Արծրունու յիշատակին
Թաւրիզ, յունվարի 26-ին
Տաս տարի է անցել այն օրից, երբ ամբողջ հայութիւնը զրկվեց իր անմահ հրապարակա-

խօսից, իր ուսուցիչ—Գրիգոր Արծրունուց, բայց մինչև այժմ դեռ նա միանգամայն թաւա- անջնջել է մնացել գրեթէ բոլոր հայերի յի- շողութեան մէջ, նա ապրում է և դեռ երկար կապրել: Նրա թողած նուիրական աւանդը, իր միակ զաւակը—«Մշակ» լրագիրը, ամեն ան- գամ ընթերցողը ձեռքը վերցնելիս յիշում է նրա հիմնադրին, այդ տաղանդաւոր խմբագրո- ղին: Երբ միշտ ժողովրդի ցուեքի հետ էր խօ- սում, նրանց դարմանելու մասին մտածում, պաշտպանում նրա իրաւունքները իր ուժեղ և սուր գրչով, հարուածում հասարակութեան համար չարիք ներկայացնող անձնաւորութիւն- ներին և երևոյթները իր թունոտ և խայթող ֆելիետոններով, պաշտպանում իր գրչին յա- տուկ թափով հայրական հարցը և այլ մի շարք նուիրական զբաղմունքներ համակում իր ըն- թերցողին:

Այսօր այդպիսի քաղցր յիշողութիւնների մի փառաւոր օր էր: Թաւրիզի հայ հասարակու- թիւնը ամբողջ 2 1/2 ժամ ապրում էր մեծ հրապարակախօսի մտքերի աշխարհում, նրա զգալի արձագանքի մասին լսում, նրա մասին մը- տածում, նրա հետ կապված յիշողութիւնները նորից, աւելի ու աւելի թարմացան:

Այդ գրական-երաժշտական մի հանդես էր, նուիրված յատկապէս Գրիգոր Արծրունու յի- շատակին՝ նրա մահվան տասնամեակի առթիւ: Այս հանդէսը կազմակերպել էր, ի հարկէ, լաւ- բանական ընկերութիւնը, որ ամեն կերպ աշ- խատել էր հանդէսը շքեղ և բազմակողմանի դարձնելու: Եղան երկու դասախօսութիւններ.— «Գրիգոր Արծրունու գրական գործունէութիւնը» և «Գրիգոր Արծրունու և թիւրքմանցիների գոր- ձերը 1878 թւին», կարգաւորեցին Գրիգոր Արծ- րունու մի առաջնորդը (տես «Մշակ» 1878 թ. № 115), որով չօչափում է հայոց հարցը, և նրա մի ֆելիետոնը («Մշակ» 1888 թ. № 148): Կարգաւորեցին նաև պ. Վ. Փափազեանի «Մշակադա» պատկերը՝ նուիրված Գրիգոր Արծրունուն՝ նրա 25-ամեայ յօբակեանի առի- թով («Տարազ» 1890 թ.) և Եր. Ղալաբեանի մի բանաստեղծութիւնը («Տարազ» 1890 թ.): Իսկ մէջ ընդ մէջ լինում էին երգեր և նուա- գածութիւններ:

Հանդէսը գրաւել էր հանդիս բազմութիւն, մօտ 250 հոգի: ամբողջ թատերասահը լիքն էր, բոլորովին բռնած, մի մասն էլ մնացել էր ոտի վրա: Ընդ էլ, այս տարի արտակարգ կերպով շատ յաճախորդներ է ունենում լաւ- բանք, միշտ էլ գրեթէ լիքն է լինում, բայց այսօր ուրիշ էր. այսքան հասարակութիւն ոչ մի դասախօսութեան և արտակարգ երեկոյթի ժամանակ չէինք ունեցել: Կային այնպիսի անձ- նաւորութիւններ, որոնք առաջին անգամն էր, որ գալիս էին լաւան, կային նաև մի քանի «տուղբ», որոնք առնասարակ չեն գալիս լաւ- բանք, բայց եկել էին այս հանդէսին և մինչև վերջ մնային: Այդ շատ ուրախալի է, բայց լաւ կանխին, որ միշտ էլ յաճախեն դասախօ- սութիւններին:

Շատ բան սովորեց հասարակութիւնը այդ 2 1/2 ժամվայ ընթացքում, շատ յիշողութիւն- ներ նորից վերարտադրվեցին և նա հետագաւ գոհ, առանց փոխաւրտ ժամանակի:

Ե. Ֆր.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՆ

«Messenger d'Athènes» լրագրին գրում են Կ. Պոլսից, թէ մեծ վիզիրը, սուլթանի հրա- մանով, տեղեկութիւն տուեց բոլոր միսիստ- րութիւններին, որ բոլոր աստիճանաւորները և օֆիցիւրները այսուհետև ոտիկ չեն ստանայ, որովհետև Թիւրքիայի բոլոր ներթական միջոց- ները պէտք է ծախսվին պետութեան անյետա- ձգելի կարիքների վրա:

Հիւսիսային Միացեալ-Նահանգների կառա- վարութիւնը այժմ կոչել է մղում ամերիկական առևտրական-գործարանական տրեստներին դէմ, վերջիններն էլ, ի հարկէ, ամեն կերպ աշխա- տում են զիմադրել այն միջոցներին, որ կա- ռավարութիւնը ձեռք է առնում նրանց հսկա- յակաւ գործութիւնը խորտակելու և նրանց վը- նասակար գործունէութիւնը չէզոքացնելու նը- պատակով: Նիւ-Եորկից այդ մասին հեռագրում են «Frankfurter Zeitung» լրագրին, թէ ամերի- կացիների հասարակական կարծիքը չափազանց վրդովված է «Standard Oil» սինդիկատի փոր- ձով՝ ճնշումն արժ զնելու ամերիկական օրէնա- գրական ժողովի մէջ, որ այժմ զբաղված է մի օրինադրի ընտնութեամբ տրեստների մասին: Նաւթային թաղաւոր Բոկֆէլդը հեռագրից ներ- ուղարկեց Վաշինգտոն՝ անաստներին, որի մէջ ապմած է, թէ քորթաւորները դէմ ուղղված օրինադրերը պէտք է մերժվեն: Բացի սրանից Բոկֆէլդը ուղարկեց Վաշինգտոն մի իրաւա- բանի, որ աշխատէ անձամբ ազդեցութիւնը գործելու անաստների վրա: Տեսնելով տրեստ- ների յայտնի դիմարկութիւնը կառավարչական

կարգադրութիւններին՝ Բոկֆէլդ յայտնեց, որ պարլամենտի արտակարգ ժողով կը գումարէ, եթէ տրեստներին վերաբերեալ օրինադրի չի ընդունվի սովորական կարգով:

«Առֆֆանի գործակալութեանը» հաղոր- դում են Ամստերդամից, թէ վերջին տեղեկու- թիւններին նայելով, Տրանսվալիան հանրա- պետութեան նախկին նախագահ Կրիզէր, որ այժմ գտնվում է Մէնստում, հոգեվարքի մէջ է: Նրա օրերը հաշւած են:

«Narodnje Noviny» լրագիրը լսել է, թէ եւրօպական մեծ պետութիւնները սպառնացել են Բ. Գրանը, որ եթէ նա յանձն չի առնի մոցնիլ պահանջված անհրաժեշտ բէֆօրմները Մակեդոնիայում, նրանք ազատութիւն կը տան Բոլղարիային գործելու այնպէս, ինչպէս նա համապատասխան կը համարէ իր շահերին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

4 փետրվարի
ՄՕՍԿՎԱ, Կազմակերպվում է մասնաւոր ձեռնարկութիւնների մէջ ծառայող կանանց փոխադարձ օգնութեան ընկերութիւն: ՄՕՍԿՎԱ, Գինեւրալ ծօնէյ ընակեցրված է Իրենտոււմ Զերակալված մակեդոնացիներ ընակեցրված են գաւառներում Մակեդոնական բողոքի միտինգը Սօֆիայում անցաւ առանց միջնադէպքերի: Պատերի վրա կայրած յայտա- բարութիւնների մէջ մակեդոնացիները հրաւի- րում են պատգամաւորներին բողոքել ապօրէն կայանաւորութիւնների դէմ ժամանակուց յե- տոյ ուսաց չիվըմատիկական գործակալ Բախ- մէտէյ զնաց պալատը, ուր տեղի ունեցաւ ունկնդրութիւն—Վաղը աչքային ժողովում հերթական է պատգամաւոր Տանկէվի հար- ցապնդումը՝ մակեդոնական կօմիտէաների փակման և զեկավարների կայանաւորների մա- օթին:

Կ. ՊՈԼԻՍ, Ռուսաց և աւստրո-ունգարական կառավարութիւնների միջև համաձայնութիւն կայացաւ՝ եւրօպական վիշալեաներում վարչ- յութիւնը բարւոքելու մասին այստեղի նրանց զեկուցանելի մշակած ներագրութիւնների ա- ռիթմի Երկու զեկուցաններն և սպասում են հետագրական հրամանագրութեան, որպէս զի կարողանան այդ առիթով համապատասխան ա- ռաջագրութիւններ անել Բ. Գրան:

Ճեճ. Սուլթանի զօրքերը յարձակվեցին ին- պիւնեան կաբէլները վրա, որոնք թեկնածուի կողմնակիցներ են, բայց ապստամբներ յետ մղեցին նրանց: Սուլթանի զօրքերը մեծ կո- րուստներ ունեն:

ՀՈՄ: Պատասխանելով պատգամաւոր Չը- մէնիի հարցապնդումին, պատգամաւորների ժողովում Բաշէլի հաղորդեց այն դրէքի մա- սին, որ խտալական կառավարութիւնը բռնել է Բալկանների վրա տեղի ունեցող անցքերի վերաբերմամբ և կոտն կամզօրֆի ճանա- պարհորդութեան մասին Բաշէլի ասեց: Կամզօրֆի գործունէութեան եղանակը, որը իր ճանապարհորդութեան ժամանակի Իտա- լիայի և Աւստրո-Ունգարիայի հետ համա- նման նպատակի էր ձգտում, Իտալիան կարող է ընդունել մեծ բաւականութեան զգացմուն- քով ճանապարհորդութիւնը վերացրեց ամեն տեսակ կասկածներ և երկիւղներ, իրազործելի դարձրեց քաղաքակրթութեան պահանջների համակերպո մը հողային status quo-ի պահ- պանման հետ և ուժեղացրեց երաշխաւորու- թիւնը այն պայմանների ապահովութեան և պահպանութեան համար, որոնց մէջ Աւստրո- Ունգարիան և Իտալիան տեսնում են ամենա- յուսալի պաշտպանութիւն Իրանի յանդէրի Իտա- լիան գոհունակութեան զգացմունքով իմացաւ Վիէնայում տեղի ունեցած բանակցութիւննե- րի մասին և յայտնեց, որ իր հայեացքները հա- մաձայն են նրանց հետ:

ՄԱՐԱԿԱՅԻՑ: Վենեցուէլական «Միբանդ» զինւորական նաւը 1,200 մարդով և 2 միլիոն փամփոռներով ուղևորվեց Տուկիակա, որ- պէս զի օգնական զօրքեր տանէ կառավարու- թեանը յեղափոխութիւնը ճնշելու համար:

Կ. ՊՈԼԻՍ, Բ. Գրան մտ չըջաններում լու- րեր են պտտում, որ փոխաւորութիւնները միաց- նելու համար կազմված յատուկ յանձնաժողովը իր վճիռը կը ներկայացնէ երկի յորեքշաբթի— Բոլղարական կառավարութեան կարական գոր- ծողութիւնները մակեդոնական կօմիտէաների դէմ թիւրքաց պատմական չըջաններին մեծ գոհունակութեան պատճառեցին:

5 փետրվարի
ՊՈԼԻՍՏՕ-ԿԱՐԷՂՈ, Պաշարուան վերացնե- լուց յետոյ, բռնված առաջատարու նաւերը յանձնվեցին ամերիկական փոխ-հիւպատոսին Պէկին: Անգլիական, ամերիկական և Ֆրանս-

